

Արձան ազգայնամուլական: Գրող Ջիա Գյոք Ալպը կոչ արեց «վերա-
 շինանալ», կայսրությունը վերածել բացառապես թուրքական ազգի՝ այ-
 կազգիների բռնի ծուլման միջոցով: Դրան պետք է հաջորդեր պանթուր-
 անական պետության ստեղծումը՝ տարածվելով Ստամբուլից մինչև Սոն-
 ղուլիա:

Երիտթուրքների գաղափարախոսությունը 1911թ. հայտարարում էր.
 «Թուրքների երկիրը Թուրքիան չէ, ոչ էլ Թուրքեստանը, նրանց երկիրը
 Այնարձակ և հավերժական հողն է՝ Թուրանը»: Դրովաժագրի կարծի-
 քով՝ 1915թ. հայերի ցեղասպանությունը հենց այդ ռազմավարության
 լծի մասն էր կազմում: Երիտթուրքների կարծիքով ազգային-հեղափոխա-
 վական նպատակները պահանջում էին հեղափոխական ձեռնարկումներ:
 Երիտթուրքերը ղեկավարվում էին պանթուրքիզմի գաղափարախոսու-
 թյամբ, իսկ հայերը երիտթուրքների պլանների համար խոչընդոտ էին
 դիտարկվում:

ԱՌՆՈ ՀՄՄԵԼԵՆ, ԺԱՆ ՄԻՇԵԼ ԲՐՈՆ, Վերականգնված
 հիշողություն. Երևան, «Ռսկան Երևանցի» հրատ., 1995, 254 էջ
 (Ֆրանս. թարգմ. Գ.Ջանիկյանի)

Գրքի հեղինակները՝ ֆրանսիացի հրապարակա-
 գիրներ Առնո Համելենն ու Ժան-Միշել Բրոնը արյու-
 նակցական որևէ կապ չունեն հայերի հետ և մինչ այս
 գրքի գրելուն ձեռնամուխ լինելը, նույնիսկ ծանոթ չեն
 եղել հայոց պատմությանը: Նրանց հետաքրքրույու-
 նը հայ ժողովրդի հանդեպ բորբոքել են 1970-ական
 թվականներից սկիզբ առած հայկական գաղտնի բա-
 նակների ահաբեկչական գործողությունները: Չբավա-
 րարվելով պատմական վավերաթղթերով, նրանք եղել
 են աշխարհի գրեթե բոլոր հայահոծ գաղթօջախնե-
 րում, բազում հանդիպումներ ունեցել, զրուցել թուրք
 պաշտոնյաների և հայ մահապարտների հետ և, ի վեր-

ջո, համոզվել, որ մեր Ժողովուրդի հանդեպ կատարվել է պատմության մեծագույն անարդարություններից մեկը:

Գիրքը (լույս է տեսել 1983 թ. Փարիզում) անառարկելիորեն ապացուցում է 1915 թ. ցեղասպանության ծրագրված լինելը, թուրքական կառավարող շրջանների կողմից պատմական ճշմարտությունը կեղծելու միտումը, սփյուռքահայերի զինված պայքարի իրավական և հոգեբանական դրդապատճառները, հայերի արդար իրավունքի անանցանելիությունը:

«Վերականգնված հիշողություն»-ը, ինչպես բնութագրում է գիրքը թարգմանիչը, «ժանրակշիռ մեղադրական է ոչ միայն թրքական բարբարոսության, այլև մարդկության անտարբերության դեմ»:

Իր «Չայ ընթերցողին» խոսքում Առնո Չամբելենը ներկայացնում է գրքի պատումի իրենց ընտրած ձևը, այն է՝ երևակայական դատարանի ստեղծումը, երևակայական «Չայկական Նյուրնբերգը», որը հնարավորություն է տվել հեղինակներին լինել առավելագույնս արդարամիտ ու անաչառ:

«Երկուսս էլ զգում էինք, թե ինչ աստիճանի չենք ուզում թուրքերի դիրքերում հանդես գալ և ինչպես ենք ձգտում պաշտպանել հայերի դատը», գրում է Առնո Չամբելենը:

Չայկական գաղտնի բանակների հայտարարությունները այն մասին, որ 1915-ին թուրքերը կազմակերպել են հայերի ցեղասպանությունը, հետևաբար արժանի են համաշխարհային հասարակության դատապարտումին, մյուս կողմից, թուրքերի՝ ցեղասպանության փաստի Ժխտումը, հայկական շարժումը միջազգային ահաբեկչության մի ճյուղը համարելը, թելադրել են գրքի հեղինակներին պատասխան գտնել երկու հարցի.

ա) Թուրքերը կատարե՞լ են 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

բ) Չայ մարտիկները չդատապարտված ոճրի պահանջատերե՞րն են, թե՞ սովորական ահաբեկիչներ:

Առաջին դրվագներում, անդրադառնալով 1975 թ. Ավստրիայում և Ֆրանսիայում թուրք դերսպանների ահաբեկմանը, հեղինակները գրում են, որ մինչ այս դեպքերը եվրոպացիները հայերի մասին համարյա ոչինչ չգիտեին, նրանց համարում էին «պատմություն չունեցող մարդիկ»:

«Մինչև 1975 թվականը գրեթե ոչ մի կառավարություն, հասարակու-
սյան ոչ մի խավ չէր հետաքրքրվել այն ջարդերով, որոնք սկսվել էին
1915-ի ապրիլի 24-ին: Քչերն էին տեղյակ, որ հայերն իրենց մշակույթն
ու պատմությունն ունեն, այն դեպքում, երբ «հրեա» բառը դեռևս 1945
թվականից էր ողբերգության զգացողություն հարուցում»:

Հետևում է հարցը. «Բայց մի՞թե մի քանի ժամկա տարբերությամբ
պետք էր անպայման երկու դեսպան ահաբեկվեին, որպեսզի «Հայաս-
տան» բառը հայտնվեր միջազգային մամուլի վերտառություններում ու
պայխագրերում»: Հիշեցնելով 1972թ. Մյունխենի օլիմպիական խաղերի
ժամանակ պաղեստինյան «Սև սեպտեմբեր» վրիժախմբի արարքը, ո-
րին զոհ գնացին Իսրայելի ութ մարզիկ, հեղինակները եզրակացնում
են. «Եթե այդ վրիժախումբը գոյություն չունենար, ՄԱԿ-ը Յասեր Արա-
ֆատի գոյությունը չէր ընդունի»:

Նույն տրամաբանությամբ հեղինակները արդարացնում են հայ
վրիժառուների գործողությունները, որոնք լույս միջոց էին, որպեսզի
հինարավոր լիներ «ճեղքել լուռության պատնեշը»:

Գրքի երկրորդ գլուխը վերաբերում է ցեղասպանության դատավա-
րությանը: Հեղինակները գրում են, որ այս գլուխը շարադրելիս հենվել
են ականատեսների վկայությունների, մասնավորապես Լեփսիուսի,
Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ.Սորգենթաուի հուշերի, Վիլիելմշտրասի
արխիվների փաստաթղթերի, անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբիի
աշխատությունների և թուրք պաշտոնյաների՝ Նաիմ բեյի ու Ռիֆաթի
խոստովանությունների վրա:

Թուրքիայի հայ ազգաբնակչության բնաջնջման առաջին լուրը
Արևմուտքին է հասել 1914թ. օգոստոսի 27-ին, «Դեյլի տելեգրաֆում»
լույս տեսած հաղորդագրության միջոցով: Նախքան բուն փաստերին
անցնելը, հեղինակները քննության առարկա են դարձրել «Հայկական
հարցն ու 1895թ. հայկական ջարդերը»: Ներկայացվում են 19-րդ դա-
րավերջին Թուրքական կայսրության ճգնաժամային վիճակը, քայքայ-
ման վտանգը, արտաքին պարտքերի տակ շնչահեղձ լինելը, ապա և՛
ռազմական անհաջողությունները, 1878-ին Ռուսաստանից կրած պար-
տությունները և այլն:

Ահա այս ճգնաժամային տարիներին էր թագավորում Սուլթան Հա-
միդը, որը և սկսեց քրիստոնյաների հալածանքը, նրանց կոտորածնե-
րը: Եվ դրանց համար առիթ էր հարկավոր: Քանի որ պարտավորված

բարենորոգումները Սուլթանը չիրականացրեց, սա էլ պատճառ դարձավ հայերի բողոքներին ու առանձին դեպքերում ըմբոստությանը: Օգտվելով այս վիճակից Գամիդը ձեռնարկեց հայերի կոտորածը: Եվ մինչ Արևմուտքը կմիջամտեր, բռնությունները 300000 հայերի կյանք խլեցին:

Այնուհետև հեղինակները անդրադառնում են երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծման պատմությանն ու հետագա գործունեությանը, 1908թ. պետական հեղաշրջմանը, երիտթուրքերի իշխանության ղեկին տիրանալու հանգամանքներին: Առաջին շրջանում՝ Գամիդի տապալման նախապատրաստական փուլում, երիտթուրքերի քաղաքականութունը հայ կուսակցությունների իդեոլոգիաների դեմ էր, ուստի դաշնակցական և երիտթուրքերի կուսակցության մերժեցումը՝ ընդդեմ «Կարմիր Սուլթանի» բնական էր, օրինաչափ: Սակայն շուտով երիտթուրքերի հռչակած ազատությունն իր տեղը գիջեց մահմեդական ազգայնամոլությանը: Քրիստոնյա հայը դառնում էր անհամարժեք: Հեղինակները հանգամանորեն անդրադարձել են երիտթուրքերի՝ հայերի համընդհանուր բնաջնջման ծրագրին, այն բացահայտել միայն վավերական փաստաթղթերով:

1915 թվականի փետրվարին Թալեաթ փաշայի նախագահությամբ տեղի է ունենում երիտթուրքական ղեկավարների հատուկ խորհրդակցություն, ուր ընդունվում է հայերի ոչնչացման վճիռը և հրահանգվում բնաջնջել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Գրքում մեջբերումներ են կատարված վերոհիշյալ ժողովում երիտթուրքերի պարագլուխների ելույթներից, որոնցից ընթերցողը պատկերացում է կազմում դժոխային նախճիրների հեղինակների գիշատիչ, զազանային էության մասին: Գրքում նկարագրվում է թե ինչպես չգոհանալով խոշտանգումներով, բանտարկություններով, սպանություններով թուրքական իշխանությունները բռնությամբ զինում էին զենքի հետ առնչություն չունեցող հայ մարդկանց և տանում մահմեդականների թաղերը՝ իբր թուրքերի վրա հարձակվողների, և մոլեռանդ խուժանին գրգռում հայերի դեմ: «Երբ հայ ազգային առաջնորդները դա զգացին, չափազանց ուշ էր արդեն: Գայերը զինաթափված էին»:

Գրքում նկարագրված են 1915թ. ապրիլյան ձերբակալությունները, հարյուրավոր մտավորականների բանտարկությունները. «Շատ կարճ ժամանակում մի ողջ ժողովրդի ընտրանին ոչնչացվեց, այսինքն

Այսատվեց ազգը: Մնում էր մարմինը վերացնել», - եզրակացնում են ժեղիհնակները: Իսկ բռնագաղթը, որ սկսվեց մի քանի օրից, գլխատված ազգի մարմնի հոշոտումն էր: «Անմեղ կոտորվածները» հատվածում ժեղքերված են թուրք կառավարողների, մասնավորապես՝ Թալեաթի ժածկագիր հրահանգները «անժանոթ անձանց» (ծածկագրում այդպես էլ են անվանել հայերին) երեխաներին ոչնչացնելու եղանակների մասին:

«Երեխաներին ոչնչացնելու ծրագիրը անհեթեթ է դարձնում հայ ժողովրդի բնաջնջումն արդարացնող թրքական բոլոր պատճառաբանությունները», - գրում են գրքի հեղինակները:

«Մահվան ճամբարները» դրվագում դարձյալ վկայակոչումների հիման վրա տրվում է հայության բնաջնջման եղանակների նկարագրությունը, զարհուրելի պատկերներ, որ դուրս են մարդկային երևակայությունից: Միայն մեկ քաղվածք՝ առնված Նյու-Յորքի «Վաքուում օյլ քոմփենի» ընկերության Հալեպի բաժանմունքի գործակալ Օգյուստ Բերնոյի «Մի քանի փաստաթուղթ հայերի 1915 թվականի նախճիրների մասին» հաղորդագրությունից: «Հալեպում աքսորականներին նախ փորել էին տալիս իրենց գերեզմաններն ու յաթաղանով, կացնով ոչնչացնում: Դեր ձորում նրանց փակում էին քարայրում ու հրդեհում...»:

Հաջորդ դրվագում, որ «Պաշտպանական» խորագիրն է կրում, հեղինակները նշում են, որ մի տասնամյակում հայ վրիժառուների կողմից կատարվել են 220 ահաբեկչական գործողություններ, որոնք չէին կարող չփշրել թուրքերի տասնամյակների լուրջ սառույցը: Եվ ահա նրանք, վերջապես, որոշեցին խոսել, առաջ քաշել իրենց տեսակետը առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ: Ցեղասպանություն չի եղել՝ ահա թուրքերի վարկածի բուն էությունը, եղել է պատերազմական դրության թելադրանքով տեղահանություն, և կառավարությունն այդ կատարել է պատշաճ հոգատարությամբ:

Գրքի հեղինակները մեկնել են թուրքիա և հանդիպումներ ունեցել պաշտոնյա գործիչների հետ. վերջիններն իրենց փաստարկումներով ոչ միայն ժխտել են հայերի ցեղասպանությունը, այլև այն կարծիքն են հայտնել, թե հայերն ավելի շատ թուրք են կոտորել, և որ Թալեաթի և երիտթուրքերի մյուս ղեկավարների, այսպես կոչված, հայերին խապառ բնաջնջելու վերաբերյալ հեռագրերն ու ծածկագրերը հայերի հորին-

վածքներն են: Ըստ թուրքական աղբյուրների՝ իբր պատերզամի նախօրեին թուրքիայում ապրել են մոտ 1.295.000 հայ, հետևաբար մեկ ու կես միլիոն հայ նահատակների պատմությունը նույնպես հայերի երևակայության արդյունք է: «Վիճարկում» դրվագում հեղինակները համադրել են երկու կողմերի տեսակետներն ու փաստարկումները, որոնք ամենաչնչին մանրամասների մեջ անգամ բացատում են մեկը մյուսին:

Հեղինակներն այստեղ կատարել են մի ծանուցում. «Հայերը 1915 թվականից ի վեր հատուցում են պահանջում, վաթսուևութ տարի հետո է միայն Անկարայի կառավարությունը ասպարեզ հանել թղթածրարներ ապացուցելու համար, որ հայկական կոտորած տեղի չի ունեցել»:

Մի բաղդատական զուգահեռով հեղինակները անդրադառնում են հրեաների ցեղասպանությանը. «Ենթադրենք միայն վաթսուևութ տարի անց 2013 թվականին էր Գերմանիան համաձայնվում բացել իր արխիվները: Դժվար է պատկերացնել, թե այդ ժամանակ ինչպիսին կլինե՞ր նացիստական կոտորածների գերմանական վարկածը, երբ այսօր նույնիսկ, չնայած դատավարությունների, վկայությունների, հողվածների, ծայնասփյուռի ու հեռատեսիլի հաղորդումների, շարժանկարների հեղեղին պատահում են պատմաբաններ և գրողներ, որոնք ժխտում են գազախցիկների գոյությունը»: Ուստի, եզրակացնում են հեղինակները, «թուրքերի ինքնաարդարացման փորձերը մի փոքր ուշացած են, և այն հանգամանքը, որ Հայկական հարցին առնչվող թղթածրարները թուրքիայում նոր-նոր են միայն բացվում, չհաշված հենց պատերազմի ժամանակ հրապարակված նյութերը, որոնք բնականաբար երիտթուրքերի տեսակետն էին արտահայտում, ողբերգության հազարավոր ժամանակակիցների, ականատեսների վկայությունների համեմատությամբ հնչում են խիստ շինծու և հավաստի չեն թվում»: Այն հարցին, թե 1915 թվականին թուրք կառավարությունը որոշե՞լ էր ամբողջությամբ բնաջնջել հայ ժողովրդին, գրքի հեղինակները պատասխանում են հստակ: Աջքաթող անելով մարդկային զոհերի թվաքանակը, որ չափազանց նվազեցրել է թուրքական կողմը, հեղինակները գտնում են, որ խնդիրը թվերի մեջ չէ, այլ պետականորեն ծրագրված սպանության:

«Ընդունենք մի պահ, որ հայերի ցեղասպանություն չի եղել, այդ դեպքում ի՞նչ եղան, ո՞ր կորան թուրքիայում բնակվող 2 միլիոն հայերը»: «Հազիվ թե ժողովուրդը, որը Չինգիզ խանից մինչև Լենկթեմուր

դիմագրավել էր ամեն տեսակ հորդաների ու բռնաճնշումների, ինքնակամ լքեր իր հողը, ուր ապրում էր երեք հազար տարի»:

Հեղինակները գտնում են, որ կանխամտածված ցեղասպանությունը հաստատող շատ փաստաթղթեր անհետացել են, ոչնչացվել և իրենց այս կարծիքը հաստատում են հետևյալ մեջբերումով. «Գողացված են հեռագրեր, վավերաթղթեր, «Թեչքիլաթի մահսուսեի» գրագրության կարևոր մասը, ինչպես նաև ընդհանուր կենտրոնի բոլոր փաստաթղթերը: Թալեաթի կառավարության հրաժարականից՝ 1918թ. սեպտեմբերի 15-ից առաջ անհետացել են նաև ընդհանուր ապահովության տնօրեն Ազիզ բեյի հաղորդումներն ու կարևոր գրությունները» (քաղվածք թուրքական պաշտոնական մատյանի 24.04.1919թ. դատական գործից):

Այնուհանդերձ պահպանվել են քիչ թվով փաստաթղթեր, որոնցից մեկը Նայիմ բեյից ստացել էր Արամ Անտոնյանը: Խոսքը Թալեաթի՝ հայերին բնաջնջելու հեռագրի մասին է, որը հրապարակվեց 1921թ. Բեռլինի դատավարության ժամանակ:

Գրքում վկայակոչված են այն փաստարկումները, որոնք առնված են Լեփսիուսի, Շտուրմերի, Մորգենթաուի, Արմին Վեգների գրքերից, ինչպես և վերապրողների պատմածներից, որոնք ամբողջովին նույնանում են վերոհիշյալ հեղինակների հաղորդած տեղեկություններին:

Փաստաթղթերի համադրումից հեղինակները տրամաբանորեն հանգում են այն եզրակացությանը, որ զուր են թուրքերի՝ հայերի ցեղասպանության ժխտման ջանքերը: 1919թ. թուրքական ռազմական տրիբունալի դատավարության նյութերը, Թալեաթին, Էնվերին, Ջեմալին հեռակա կարգով մահվան դատապարտման փաստն, ինքնին, հայերի ցեղասպանության փաստացի ճանաչումն էր:

«Բնաջնջման կոչ» դրվագում կան այսպիսի տողեր. «Կրոնական մուլեռանդությունը, դարավոր ատելությունը, հայերի բարեկամության հանդեպ նախանձը՝ ջարդերի հիմնական պատճառը եղան...»: Սակայն, այս ամենով նույնիսկ չի կարելի բացատրել կոտորածների ծավալն ու ընդգրկումը: Ուրեմն, ի՞նչ անհասկանալի ուժ դրդեց Օսմանյան կայսրությանը դիմել այդ ոճրագործությանը: Հետևում է պարզ պատասխանը. «Անշուշտ, նախճիրը երբեք նման չափեր չէր ընդունի, եթե գերմանական դիվանագիտությունը կամա թե ակամա չնպաստեր դրան»: Ոչինչ այնպես չէր կարող մահմեդական զանգվածներին ոտքի հանել քրիստոնյա Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի դեմ, ինչպես կրոնա-

կան մոլեռանդությունը: Եվ գերմանական գաղտնի ժառանգությունների կողմից լույս ընծայվեց և մահմեդական աշխարհում տարածվեց մի գրքուկ, որ լցված էր քրիստոնյաներին բնաջնջելու կոչերով: Եվ քանի որ այդ կոչերը ոչ թուրք մահմեդական շրջաններում անարձագանք մնացին, երիտթուրքերը զենքն ուղղեցին կայսրության քրիստոնյաների դեմ ու գերմանացիների նենգ համաձայնությամբ սկսեցին հայերի կոտորածը:

«... Հասարակական կարծիքից սարսափած կայգը մտադացրեց կանգնեցնելու մի քանի փորձ արեց, բայց այն այնպիսի թափ էր առել, որ առանց Բարձր Դռան հետ հարաբերությունները փչացնելու արգելակել հնարավոր չէր: Ստիպված Վիլհելմը փակեց աչքերն ու թույլ տվեց, որ ամեն ինչ իր հունով ընթանա»:

Գրքի երրորդ գլխի նախախոսքում նկարագրված է Թալեաթի սպանությունը, վրիժառու Թեհլիրյանի դատավարությունն ու վերջինիս արդարացումը: Դատավարությունը բացահայտեց ոչ միայն թուրքերի նախճիրները, այլև Գերմանիայի մեղսակցությունը: Հիշատակված են Սայիդ Հալիմի (1921թ., 6 դեկտեմբերի, Մալթա), Բեհեդդին Շաքիրի (1922թ., 17 ապրիլի, Բեռլին), Ջեմալ փաշայի (1922թ., 25 հուլիսի, Թիֆլիս) և Էնվերի (1922թ., 4 օգոստոսի, Բուխարա) սպանությունները, որ ի կատար ածեցին հայ վրիժառուները՝ Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Պետրոս Տեր-Պետրոսյանը, Արտաշես Գևորգյանը և Մելքոնյանը:

«Բռնադատվող բռարարքներ» հատվածում խոսվում է Գուրգեն Յանիկյանի մասին, որը 1973-ին Լոս Անջելեսի «Բալթիմոր» հյուրանոցի ռեստորանում գնդակահարեց Թուրքիայի հյուպատոս Մեհմեդ Բեյդարին և փոխհյուպատոս Բեհադդին Դեմիրին: 78-ամյա Յանիկյանին դատապարտեցին տասը տարվա բանտարկության:

«Վաթսուն տարի անց, երբ մոռացությունը թաղել էր Հայկական հարցը, Լոս Անջելեսում Յանիկյանի բռնարարքը արթնացրեց, անհանգստացրեց բոլորին: Սարդկության խիղճը կուզեր քնած ձևանալ, նա փորձում էր փակ պահել աչքերը, բայց պատրույզն արդեն վառված էր: Պատահական չէ, որ Վիեննայում և Փարիզում թուրք դեսպանների երկու ահաբեկումների պատասխանատվությունն ստանձնեցին հայ վրիժառու խմբերը»: Դրանով սկզբնավորվեց հայերի զինված պայքարը, որը մտավ նոր փուլ: Թվարկված են վրիժառու խմբերի անվանում-

ները, որոնք մինչև 1983 թ. կատարեցին 200 բռնարարք: Սեջբերված է ԱՍԱԼԱ-ի կանոնադրության հիմնական կետերը: Թվարկված են թուրքական ու ֆրանսիական հիմնարկների պայթեցումները, սպառնալիքները ֆրանսիական կառավարությանը, որպեսզի վերջինս ընդունի և ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Մանրամասն նկարագրված են «Օռլի» օդանավակայանի հետ առնչված անցքերը, Լիսաբոնում թուրքական դեսպանատան պայթեցումը, որի փլատակների տակ ինքնական ողջակիզվեցին հայ ազատամարտիկներ Վաչե Տաղյանը, Սեդրակ Աճեմյանը, Արա Քրջյանը, Սիմոն Շահենյանը և Սարգիս Աբրահամյանը: ԱՍԱԼԱ-ն հայտարարություններ էր տարածում թրքական հաստատությունների դեմ կազմակերպվող նոր հարձակումների՝ մասին:

«Հայերի դատապնդումը» դրվագում խոսվում է դաշնակից պետությունների դավաճանության, հայերին լքելու, նրանց կեղծ խոստումների մասին: «Որպեսզի հասկանալի լինի հայերի զինված պայքարի ու արյունալի զոհերի բուն պատճառները, որոնք 1975-ից ի վեր չեն դադարում, պետք է տասնյակ տարիներ հետ գնալ, անդրադառնալ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ստեղծմանն ու Մուստաֆա Քեմալի քաղաքական վերելքի շրջանին»: Հեղինակները բավական հանգամանորեն լուսաբանել են վերոհիշյալ տարիների քաղաքական անցքերը, պարզաբանել թե ինչու և ինչպե՞ս ստեղծվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը, անդրադարձել Սարդարապատի ճակատամարտին, Բաթումի, Ալեքսանդրապոլի, Լոզանի պայմանագրերին, Բաքվի և Կովկասի հայաբնակ վայրերի, Կիլիկիայի, Չմյուռնիայի կոտորածներին, Անգլիայի ու Ֆրանսիայի դավաճանական դիրքին, բուլշևիկների և քեմալականների մերձեցման դրդապատճառներին:

1923թ. Հաշտության պայմանագիր է կնքվում Թուրքիայի և դաշնակիցների միջև, ուր թաղվում է Հայկական հարցը: «Ով պայմանագրում փորձի «Հայաստան» բառը փնտրել, հետքն անգամ չի գտնի,- ավելի ուշ կհայտարարի Ուիլսոնը Չերչիլը,- Մուսուլի քարյուղն ավելի արժեք ունեցավ, քան հայերի արյունը»:

Հաջորդ հատվածը կրում է «Լռության դավադրությունը» խորագիրը: «Թուրք ազգայնականները դաշնակից երկրների օգնությամբ ճարպկորեն հողին հանձնեցին «Հայկական ցավալի դեպքերը»: Մուստաֆա Քեմալին հաջորդող նախագահներն ու վարչապետերը երբեք չանդրադարձան իրենց նախորդների ոճրագործություններին: «Ամեն

անգամ, երբ միջազգային խորհրդածողովներում արծարծվում էր Հայկական հարցը, թուրք պատվիրակը ելնում-գնում էր»: Այնուհետև խոսվում է այն մասին, թե ինչպես թուրքերը բուժ համառությամբ կանգնում են ճշմարտության ճանապարհին, բողոքում հայ նահատակների հիշատակին հուշարձանների բարձրացման, «ցեղասպանություն» բառի գործածման դեմ, այն ամենի, ինչը ծառայում է արդարության բացահայտմանը: Ահա այսպիսի հանգամանքների, թուրքերի ուրացողության, Մեծ պետությունների դավադիր լուռության հետևանքով է, որ հայ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները ստիպված դիմել են զենքի: «Ինչպիսի ծագում, ծրագիր ուզում է ունենան, հայակական գաղտնի զինված պայքարի մասնակիցները համարվում են ոչ թե ահաբեկիչներ, այլ արդարության մարտիկներ», - գրում են հեղինակները:

Հաջորդ «Թուրքերի դատապնդումը, Հայ մարտիկները պարզապես ոճրագործներ են» դրվագում հանգամանորեն խոսվում է Անկարայի օդանավակայանում ԱՍԱԱ-ի տղաների ահաբեկչության և նրանցից մեկի՝ Լևոն Էքմեջյանի բանտարկության ու դատապարտման մասին: Ներկայացված է այն հարցազրույցը, որ ունեցել է մահապարտի հետ գրքի հեղինակներից մեկը՝ Ամնո Համելենը: Գրքում զետեղված է հարցազրույց Թուրքիայում ապրող մի երկու երևելի հայերի հետ, որոնք դատապարտել են ահաբեկչությունը, ցեղասպանությունը դեպք համարելով, գոհունակություն են հայտնել թուրքական կառավարությունից, որ իրենց կյանքը ապահով է ու անվտանգ, որ չկա ազգային խտրականություն և այլն:

«Կողմերի վիճաբանությունը» գլխում խոսվում է հայերի ուշացած շարժման պատճառների, վերականգնված հիշողության մասին: «Դժբախտաբար առաջին աշխարհամարտն իր Նյուրնբերգը չունեցավ, որպեսզի դատեր պատերազմի հանցագործներին»: Բացատրված է և սրա պատճառները՝ ժամանակի կապի միջոցների տկարությունը, հայկական հզոր ու կազմակերպված սփյուռքի բացակայությունը:

Հաջորդ հատվածը վերաբերում է ֆրանսահայ համայնքի պատմությանը, մշակույթին կրթությանն ու եկեղեցուն: Հեղինակները կազմել են աշխարհի տարբեր երկրներում ապրող հայության աղյուսակը՝ 1920-ական թվականների տվյալներով: Թարգմանիչը առանձին տվել է այսօրվա թվերը: Գրքում ներկայացված են համայնքների անցյալն ու ներկան:

«Պահանջատերեր՝ թե՛ ահաբեկիչներ» դրվագում հեղինակները պատմում են այն մասին, թե հին, հին ժամանակներից մինչև այսօր ի՞նչ տեղ է ունեցել ահաբեկչությունը քաղաքականության մեջ: Նրանք գրում են. «Ահաբեկչություն» բառը, իրավացիորեն գտնում է Ռուանդա բարձր, ավելի շատ օգտագործվում է վախեցնելու, քան համոզելու համար: Գալով հայերին, նրանք նախընտրում են բառի պատմական իմաստը, որն ինչպես հայտնի է, ստեղծվեց Ռոբեսպիերի ժամանակ... «տեռորի քաղաքականությունը», այսինքն պետական բռնությունը: Հայերի համար ահաբեկիչը ոչ թե նա է, ով պայքարում է ճնշման դեմ, այլ ճնշողը, այսինքն նա, ով բանտարկում է, փակում դպրոցները, պղծում եկեղեցիներն ու ավերում հուշարձանները, նա, վերջապես, ով ձգտում է խեղդել հալածվածների ճիչը: Մի խոսքով՝ թուրքը»:

«Հայերը բռնության դեմ հանդիման» հատվածում խոսվում է այն մասին, որ 1975-ից ի վեր հայկական ահաբեկչությունը ծայրահեղ ձևեր է ընդունում, որ խստագույնս դատապարտում են ոչ միայն թուրքերը, այլև սփյուռքահայ շատ գործիչներ, կասկած հայտնելով, թե ԱՍԱԼԱ-ն ղեկավարում են Անկարայի գաղտնի ժառանգությունները, համաշխարհային հանրության աչքում հայերին վարկաբեկելու նպատակով:

Զխրախուսելով ահաբեկչությունն առհասարակ, հեղինակները գրում են. «Ձոռ եղած լինելու հանգամանքը ոչ ոքի իրավունք չի տալիս իր հերթին դահիճ դառնալ: Եվ ոչ մի սպանված անցորդ, զնդակահարված պաշտոնյա հայերի արդարացի դատին պատիվ չի բերում: Մյուս կողմից էլ տարօրինակ չպետք է թվա այն հանգամանքը, որ երբ արդարությունն աչք է փակում անարդարության առջև, զոհերն իրենք են մերկացնում թրերը»:

«Ահաբեկչությունը համաժողովրդական ատյան է հանում միջազգային քաղաքականության բուժ անտարբերությունը: Հայերն առաջին պաշտոնական ամբիոններն ստացան հենց իրենց մարտիկների դատավարության կապակցությամբ»: Մեկ անգամ չէ, որ Հայկական հարցը քննարկման առարկա է դարձել Ֆրանսիական խորհրդարանում:

1979թ. ապրիլի 6-ի նիստում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Գիրենգոյը հայտարարել է. «Ֆրանսիայի կառավարությունն անվերապահորեն ընդունում է, որ 1915 թվականի ողբերգությունը պատմական փաստ է, և ոչ մի ազգային կամ միջազգային կազմակերպություն այդ չի կարող ջնջել ժողովուրդների հիշողությունից: Սա վե-

րաբերում է բոլոր ցեղասպանություններին»:

Վերջապես բառն արտասանված է՝ նշում են հեղինակները և «այս տեսակետից Ֆրանսիան դառնում է Չայոց դատը պաշտպանող առաջին երկիրը»: Չեղինակների եզրակացությունն այն է, թե հայերի բռնարարքները, ահաբեկումները զուր չեն անցել:

«Դեռևս մի քանի տարի առաջ «հայ» բառը մեր մտապատկերում նույնանում էր հոտավետ Ֆրանսիայում հայտնի հայկական ձեռոցիկների ու Շառլ Ազնավուրի անվան հետ: Այժմ շատ արագ, միջազգային չափանիշներով, այն դառնում է ցեղասպանության հոմանիշը»:

«Չակամարտության դասերը» գլխում, չընդունելով հայկական խմբերի անհմատ, արկածային որոշ բռնարարքներ, հեղինակները գտնում են, որ պետք է հասնել այն բանին, որ աշխարհն իմանա հայ դատը: «Ուշադրություն դարձրեք հրեական ցեղասպանությանը նվիրված շարժանկարների թվին, ծայնասփյուռի և հեռատեսիլային հաղորդումների, գրքերի, մամուլի հոդվածների վրա, որոնք անընդհատ արթուն են պահում հանրության խիղճը: Ո՞րտեղ են հայերի գրած, արտադրած կամ նկարահանած շարժանկարները, հաղորդումները, գրքերն ու հոդվածները: Ի՞նչ են արել նրանք, ի՞նչ են անում իրենց դատը մոռացնել չտալու համար»:

«Մինչդեռ հայկական պահանջատիրությունը մերն է, բոլորինս՝ հայ լինենք, թե ոչ ... Ահա թե ինչու բոլոր առումներով էլ վտանգավոր ու դատապարտելի կլինի, եթե անպատասխան մի բռուցք նման արդարացի պայքարը շեղի իր ուղուց, որովհետև այն մեզ ահազանգում է՝ յուրաքանչյուր ցեղային, կրոնական, ազգային կամ ընկերային փոքրամասնություն ցանկացած պահի կարող է դառնալ բռնատիրական, որևէ իշխանության քմահաճույքի առարկա: Միշտ պետք է հիշել անցյալի դասերն ու զգոն լինել: Չիշողությունը կորցրած աշխարիը կորած աշխարհի է ...»:

Այսպես է վերջավորվում ֆրանսիացի հեղինակների՝ Առնո Չամբելենի և Միշել Բրոնի «Վերականգնված հիշողություն» գիրքը:

«Չավելվածում» ներկայացված է հայ-թուրքական հակամարտության ժամանակագրությունը՝ Արդուլ Չամիդի գահակալության շրջանից մինչև մեր ժամանակները: Վերջում տրվում է մատենագիտական ցանկ:

